շանաւոր գերի։ Մի տարի բանտում մնալուց յետոյ վախճանուեցաւ Ստեփաննոս Դ. և թաղուեցաւ այնտեղ Հաբաշների եկեղեցում։ Սիւնեաց բարձունքներից տխրագին դիտեց, տեսաւ Ստեփաննոս Օրբէլեան քրիստոնեայ Հայոց այս բեկումը, տեսաւ այն Հռոմկլայի անկումն, ուր մի քանի տարի յառաջ ինքը Ս. Լուսաւորչի աջով եպիսկոպոս էր օրհնուել և համբուրել էր այնտեղ գումարուած սրբութիւնները, իմացաւ, որ «ամենայն սրբութիւնքն, որ գերեցան, կորեան անհետ և անգիւտ, և բնաւ ոչ երևեցան, թէև բազում անգամ յոյզ եղև ի թագաւորէն Հեթմոյ» և ամբողջ ազգի վիշտը, կարծես, միանգամից նորա սրտի մէջ կեդրոնացաւ, անզօր լինելով անդառնալի կորուստն յետ բերելու, նա, ի վերջոյ, լալահառաչ աղաղակումէ. «ո՞ւր են այժմ ղգեստքն Հայրապետական, ո՞ւր թագքն պատուական, ո՞ւր աջն և գաւազանն և աթոռն սրբոյն Գրիգորի»։

Ե.

Այս ծանր հարուածից յետոյ Հայրապետական աթոռը փոխադրուեցաւ Սիս, ուր մնաց նա մինչև 1441 թիւը։ Օրբէլեանի խօսքերից երևումէ, որ դեռ 1294 թուին Հեթում Բ. թագաւորն հետա-